

<<Գյոււմրու Մննդատուն>> ՓԲԸ-ի
Երկամյա զարգացման ծրագիր

“ԳՅՈՒՄՐՈՒԾՆԵՂԱՏՈՒՆ” ՓԲԸ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

1.1 Ընդհանուր տեղեկություններ բուժօգնության վերաբերյալ	
Անվանում	“Գյումրու ծննդատուն” ՓԲԸ
Հասցե, հեռախոս	Ք. Գյումրի Կոշտոյան 3, 031230809 031234159
Տնօրեն	Էդգար Ռուբիկի Սուքիասյան
1.2 Բուժօգնության կողմից տրամադրվող ծառայությունների հակիրճ նկարագրություն	
<p>- Կանացի և աղջիկների վերարտադրական առողջության պրոֆիլակտիկ հսկողություն, հիվանդությունների հայտնաբերում ու բուժում:</p> <p>- Նախածննդյան հսկողություն ինչպես նորմալ ընթացող, այնպես էլ բարձր ռիսկի հղիներին:</p> <p>- Ծննդաբերության վարում, հետծննդյան շրջանի հսկողություն:</p> <p>- Մանկաբարձագինեկոլոգիական վիրահատություններ ամբողջ ծավալով:</p> <p>- Դեռահասների վերարտադրական առողջության և գինեկոլոգիական էնդոկրինոլոգիայի կաբինետ:</p> <p>- Լաբորատոր- գործիքային ախտորոշիչ հետազոտություններ, այդ թվում՝ . ֆունկցիոնալ ախտորոշում/ուլտրաձայնային, էլեկտրոսրտագրություն/ . կլինիկական բիոքիմիական լաբորատորիա . բջջաբանական լաբորատոր հետազոտություն . իմունոֆերմենտային լաբորատորիա/հորմոնալ անալիզներ, հակամարմինների որոշում մի շարք ինֆեկցիաների նկատմամբ . ֆիզիոթերապևտիկ ծառայություն . թերապևտի կաբինետ</p>	
1.3 Շենքային պայմանները	
<p>Գյումրու ծննդատունը գտնվում է Կոշտոյան 3 հասցեում: Շենքը միահարկ է 1805.28 քառ.մ. ընդհանուր մակերեսով, ունի կիսանկուղային հարկ 1817,0 քառ.մ. ընդհանուր մակերեսով: Շենքը կարիք ունի մասնակի վերանորոգման՝ ներքին կոսմետիկ վերանորոգում, հատկապես միջանցքների հատակը, պատերը, տանիքը:</p>	
1.4 Բուժ. սարքավորումներ և գործիքներ	
<p>Հիվանդանոցը ունի մասնագիտական բուժօգնություն ու լաբորատոր- գործիքային ախտորոշիչ հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ բուժսարքավորումները, սակայն դրանց մեծ մասը, մասնավորապես՝ ուլտրաձայնային հետազոտության սարքավորումները, անզգայացման արհեստական շնչառության սարքավորումները, լապարասկոպիկ վիրահատությունների սարքավորումները գտնվում են ֆիզիկապես և բարոյապես մաշված վիճակում:</p>	

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծննդատան զարգացման ծրագրի հիմքում պետք է դրված լինեն հետևյալ նպատակները

1. Մարզում իջեցնել մայրական և պերինատալ մահացությունը
2. Ապահովել անվտանգ ծննդաբերություն՝ լավացնելով մայրերի և նորածինների կյանքի որակը
3. Բարձրացնել կանանց վերարտադրողական համակարգի հիվանդությունների ու չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերման և բուժման մակարդակը
4. Լավացնել բուժանձնակազմի ու կանանց փոխհարարբերությունները
5. Բարձրացնել հղիների ու հիվանդ կանանց վստահությունը բուժանձնակազմի նկատմամբ
6. Մատուցվող ծառայությունների մակարդակը և որակը հնարավորին չափ մոտեցնել միջազգային ստանդարտների:

Այս ամենը չպետք է պայմանավորված լինեն կանանց սոցիալական վիճակից, բնակավայրից, ազգային պատկանելիությունից:

Ռիսկների գնահատում

1. Ծանրֆինանսատնտեսական վիճակ,
2. Ժամանակակից բուժսարքավորումների պակաս,
3. Կադրերի գերհագեցվածություն,
4. Մարզից վերարտադրողական տարիքում գտնվող բնակչության արտահոսք,
5. Մարզի ազգաբնակչության և ծննդօգնության հիմնարկների քանակի, անհամապատասխանություն
6. Վերապատրաստված բժիշկների պակաս:

ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Հիվանդանոցի ֆինանսատնտեսական վիճակի բարելավում

ա/ Հաշվապահական հաշվառումը օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու նպատակով անհրաժեշտ է, որ կազմակերպությունն ունենա փորձառու ու որակավորված մասնագետ՝ գլխավոր հաշվապահ: Այս քայլը հնարավորություն կտա ներկայիս ծանր ֆինանսատնտեսական վիճակում ճիշտ պլանավորել ընկերության ծախսերը եկամուտներին համապատասխան և փորձել տնտեսել գումար, որը կարելի կլինի ուղղել ընկերության զարգացմանը:

բ/ Վճարովի ծառայություններից մուտքերի ապահովում ինչպես բժշկական այնպես էլ հարբժշկական ծառայություններից:

2. Ապահովել հիվանդանոցի հագեցվածությունը ժամանակակից բուժ. սարքավորումներով:

ա/ Վարկային միջոցներով ժամանակակից գերծայնային հետազոտության սարքի ձեռքբերում, ինչը կնպաստի հղիների մոտ վաղաժամ հայնտաբերել պտղի զարգացման արատները, կանխատեսել փոքր քաշով նորածինների ծնունդը, ինչպես նաև կատարել կանանց կրծքագեղձի հիվանդությունների հայտնաբերման սկրինինգ: Այս քայլը հնարավորություն կտա բարձրացնել բնակչության վստահությունը կազմակերպությունում իրականացվող ախտորոշիչ մեթոդների նկատմամբ, ինչը կբերի լրացուցիչ ֆինանսական մուտքեր որոնք կուղղվեն սարքավորումը ձեռք բերելու համար վերցված վարկային միջոցների մարմանը և կազմակերպության կուտակած ֆինանսական պարտավորությունների որոշակի մասի մարելուն:

բ/ Արհեստական շնչառության-անզգայացման սարքավորում մեծահասակների համար և արհեստական շնչառության սարքավորում նորածինների համար: Վերջինիս ձեռքբերումը հնարավորություն կտա սահմանափակել ժամանակից շուտ ծնված և ռեանիմացիոն միջոցառումների կարիք ունեցող նորածինների մայրաքաղաք տեղափոխումը: Նշված սարքավորումները բավական թանկ-արժեք են. ուստի դրանց ձեռքբերման համար փորձել դիմել մարզային իշխանություններին, բարեգործական հիմնադրամներին. կազմակերպություններին և անհատ բարերարներին:

3. Մատուցվող ծառայությունների որակի բարելավում:

ա/ Խստորեն հետևել ավագ, միջին ու կրտսեր բուժանձնակազմի բնակչության նկատմամբ վերաբերմունքին: Յուրաքանչյուր աշխատակից պետք է գիտակցի, որ իր անբարեխղճ վերաբերմունքով վնասում է ամբողջ կոլեկտիվին, ուստի նման վերաբերմունք դրսևորելու դեպքում կտուժի ֆինանսապես կամ կարող է զրկվել աշխատատեղից:

բ/Տեսակցության ժամերի ու տեսակցող անձանց քանակի սահմանափակում, քանի որ ոչ բոլոր ծննդկաններին և հիվանդներին է հաճելի երբ հիվանդասենյակում ցանկացած պահի կարող են գտնվել միաժամանակ մի քանի անձիք, այդ թվում ոչ աղեկվատ էնոցիոնալ վիճակում: Սա առավել արդյունավետ կիրականացվի այն դեպքում երբ ծննդատունը ունենա անվտանգության ծառայու-թյուն, որը ունեն մեր քաղաքի ու մայրաքաղաքի շատ բուժ հաստատություններ:

գ/ Առավելագույն չափով փորձել հետադարձ ինֆորմացիա “feedback” ստանալ ծննդատուն դիմած հղիներից, ծննդկաններից ու հիվանդներից: Սապետք է իրականացնել համագործակցելով տեղամասային ընտանեկան բժշկների և մանկաբարձգինեկոլոգների հետ: Ստացվող ինֆորմացիան կօգնի հասկանալ բնակչության դժգոհության պատճառները և շտկել բացերը մատուցվող ծառայություններում:

դ/ Պարբերաբար հրավիրել հանրապետության առաջատար մասնագետներին բնակչությանը խորհրդատվություն իրականացնելու և դժվարամատչելի վիրահատություններ կատարելու:

ե/ Հղիների և հիվանդ կանանց ստացիոնարում գտնվելու պայմանների բարելավում`

զ/ պարբերաբար մարզի հեռավոր բնակավայրերում կազմակերպել պրոֆիլակտիկ ստուգումներ:

է/ապահովել երիտասարդ մասնագետների վերապատրաստումները որպեսզի տեղյակ լինեն ու կարողանան զործնականում կիրառել ախտորոշման և բուժման ժամանակակից մոտեցումները, վիրահատական նորագույն տեխնոլոգիաները:

Գործադիր



Է. Սուքիասյան